ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2015 թվականի N 359-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանարապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանարապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի մի խումբ բնակիչների դիմումները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել՝ Նվեր Միքայելյանին 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ և Գեղեցիկ Մուրադյանին 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 29
ք. Հրազդան

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզպետի
2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 359-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Նվեր Միքայելյան	ք.Հրազդան Միկրոշրջան 218 շենք 48 բնակարան	100 000	
2	Գեղեցիկ Մուրադյան	ք.Հրազդան Միկրոշրջան 4 շենք 22 բնակարան	23 000	